

[LOCAL EDUCATIONAL AGENCY LETTERHEAD]

[Date]

[Name of LEA] Աշակերտներու Ծնողներ եւ Խնամակալներ:

ԲԱՐԵԼԱԻՄԱՆ ԵՆԹԱԿԱՅ ՃՇՂՈՒԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ  
ՀԱՍՏՏՈՒԹԻՒՆ

Նախակրթարանի ու Երկրորդական Ուսման Որոշումը (ՆԵՈՈ) [The Elementary and Secondary Education Act (ESEA)] / The No Child Left Behind (NCLB) Ուել Մանուկ Ետ Չձգել (ՈՄԵՉ) 2001 թուականի օրենքը կը պահանջէ, որ նահանգները իրենք ճշդէն թէ իւրաքանչիւր աշակերտ անգլերէնի, արուեստի եւ թուաբանութեան մարզերուն մէջ ի՞նչ պէտք է սորվի եւ իւրացնէ իր դասարանի մակարդակին համեմատ: Իւրաքանչիւր վարժարան պէտք է բարելաւուի ամէն տարի մինչեւ որ բոլոր աշակերտները տուեալ մակարդակին հասնին: Ուսումնական եւ այլ մարզեր ընդգրկող վարժարաններու այս տարեկան բարելաւումը կը կոչուի Adequate Yearly Progress (AYP) Տարեկան Բաւարար Յառաջընթաց (ՏԲՅ):

ՆԵՈՈ / ՈՄԵՉ-ը նաեւ կը պահանջէ, որ Քալիֆորնիա նահանգի Կրթական Բաժանմունքը [California Department of Education- (CDE)] տարեկան քննութիւն կատարէ Տեղական Դաստիարակչական Հաստատութիւններուն (ՏԴՀ) Local Educational Agency (LEA), որոնք յատուկ նպաստ կը ստանան ՈՄԵՉ-ի հիմամբ: Նպաստ ստացող հաստատութիւնները կրնան դպրոցական շրջաններ կամ գաւառային կրթական գրասենեակներ ըլլալ: Եթէ նպաստ ստացող վարժարան մը անգլերէնի, արուեստի եւ թուաբանութեան մարզերուն մէջ երկու իրերայաջորդ տարիներու ընթացքին ՏԲՅ-ի հաստատած բարելաւման չափանիշերը չամբողջացնէ, կը վերածուի բարելաւման կարիք ունեցող ՏԴՀ-ի:

ՆԵՈՈ / ՈՄԵՉ-ն կը պահանջէ, որ Քալիֆորնիոյ Կրթական Բաժանմունքը ծնողները/խնամակալները տեղեակ պահէ իրենց զուակներու յաճախած վարժարաններուն յառաջդիմութեան մասին: [Name of LEA] այժմ նկատի առնուած է իբրեւ բարելաւման կարիք ունեցող ՏԴՀ: Այս գծով կրնաք աւելի մանրամասն տեղեկութիւններ քաղել [District Web site for LEA AYP reports]-էն: Եթէ համացանց գործածելու կարելիութիւնը չունիք, կապ հաստատեցէք [Name of contact person for LEA] հետ՝ վարժարանի պատկանած դպրոցական շրջանի գրասենեակին, հետեւեալ հեռաձայնի թիւով [phone number of contact

person], որպէսզի վարժարանի մասին պատրաստուած տեղեկագրէն օրինակ մը ստանաք:

Իբրեւ բարելաւման կարիք ունեցող, մեր ՏՂՀ [insert type of LEA: district or county office of education]-ը պէտք է՝

- Վերատեսութեան ենթարկէ Տեղական Դաստիարակչական Հաստատութեան ծրագիրը եւ լրացուցիչ գեկույց պատրաստէ անոր մասին: Պէտք է խորհրդակցինք վարժարանի ծնողներուն եւ ուսուցիչներուն հետ՝ լրացուցիչ գեկույցի գրութեան միջոցին յստակացնելով, թէ ինչպէ՞ս կը ծրագրենք ստացուած նպաստը աշակերտներու ուսումնական իրավիճակը բարելաւելու համար: Ծրագիրն ամբողջությամբ տրամադրելի պիտի դարձնենք LEA-ի կայքէջին վրայ:
- Վարժարանի ստացած տարեկան նպաստի առնուագն տասը առ հարիւրը պիտի յատկացուի ուսուցիչներու եւ վարժարանի այլ պաշտօնէաներու բարելաւման յատուկ վերա-որակաւորման ծրագիրներու:
- Շարունակէ օժանդակութիւն տալ բարելաւման կարօտ վարժարաններուն:

**Ծնողները ինչպէ՞ս կրնան օժանդակել իրենց զաւակներուն յաճախած վարժարանի բարելաւման:**

Ստորեւ կու տանք կարգ մը օրինակներ այն մասին, թէ ինչպէ՞ս կրնաք օգնել վարժարանին:

- Զարգացուցէք ձեր գիտութիւնը ՆԵՈՈ / ՈՄԵԶ-ի կապակցութեամբ եւ մտածեցէք աշակերտներու աշխատանքն ու մակարդակը բարելաւելու ձեւերու մասին: Այս գծով յաւելեալ տեղեկութիւններ կրնաք քաղել հետեւեալ կայքէջերէն՝
- Քալիֆորնիա նահանգի Կրթական Բաժանմունք  
<http://www.cde.ca.gov/sp/sw/t1/titleparta.asp> եւ  
<http://www.cde.ca.gov/ta/ac/ay/tidetermine.asp>

- Միացեալ Նահանգներու Կրթական Բաժանմունք  
<http://www.ed.gov> եւ <http://www.ed.gov/parents/landing.jhtml>
- Վարժարանի պատասխանատուներուն հետ խօսեցէք վարժարանը աշխուժացնելու ծրագրին մասին եւ թէ ի՞նչ պէտք է ընել բարելաւելու համար աշակերտներուն մակարդակը ընթերցանութեան եւ թուաբանութեան մէջ:
- Այցելեցէք ձեր զաւակին յաճախած վարժարանը. կրնաք նաեւ կամաւոր աշխատանք կատարել կացութիւնը բարելաւելու համար:
- Եթէ նման նպաստ ստացող վարժարան յաճախող աշակերտի մը ծնող կամ խնամակալ էք, հարց տուէք թէ կրնա՞ք ձեր զաւակը բարելաւման ընթացքի մէջ չեղող վարժարան մը փոխադրել, նոյնիսկ եթէ դուք պիտի վճարէք անոր վարժարան երթելէկի ծախսը:
- Եթէ երկու տարի եւ աւելի նման նպաստ ստացող վարժարան յաճախող աշակերտի մը ծնող կամ խնամակալ էք, հարց տուէք թէ ձեր զաւակին բարելաւման համար ուրիշ ի՞նչ միջոցներ հնարաւոր են, ինչպէս օրինակ՝ արտադպրոցական դասի սերտողութիւն, անոր կարիքը ունեցող աշակերտներուն համար:

Կը յորդորեմ ձեզ կապ հաստատելու [Name and contact information of LEA] -ի հետ յաւելեալ մանրամասնութեանց համար, ինչպէս նաեւ այս բարելաւման ծրագրի գծով ձեր մասնակցութեան մասին:

Յարգանք՝

[Name of Superintendent]

[Name of LEA]

***[NOTE TO LOCAL EDUCATIONAL AGENCIES (LEAS): As a form of assistance to LEAs, the California Department of Education (CDE) offers this translation free of charge. Because there can be variations in translation, the CDE recommends that LEAs confer with local translators to determine any need for additions or modifications, including the addition of local contact information or local data, or modifications in language to suit the needs of specific language groups in the local community. If you have comments or questions regarding the translation, please e-mail the Clearinghouse for Multilingual Documents (CMD) at [cmd@cde.ca.gov](mailto:cmd@cde.ca.gov).]***